

Ս Ե Կ Ո Ւ

Ա Մ Ա Ա Գ Ի Ռ

Ա Զ Գ Ե Յ Ե , Բ Ե Լ Ո Ւ Յ Ե , Գ Ր Ե Վ Տ Տ Ե Յ  
Ե Ւ Ք Ե Վ Ե Յ Ե

---


Ա Թ Ե Զ , Ի Ւ Տ Ե Ր Ի Ւ

Յ Ե Ր Ա Ւ Յ Ե Դ Ո

Ե Տ Պ Ա Ր Ա Ն Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ

1866





# Ա Մ Ս Ա Գ Ի Ր

ԵԶԳԵՑԻՆ. ԲԵՆՅՈՒՐԵԿԵՆ ԵՒ ԳՐԵԳՐՏՏԵԿԵՆ

ԱԹԵԶԻՆ ՏԱՐ. ԹԻՒ 7.

ՀՅԱԼԱ ՄԻԱՐԵԱՅ

1 ՅՈՒՆԻ 1866

## ԱԶԳԱՅԻՆ



ԱՐԴԱՐԻՈՅ ՀԱՅԱԲՆԱԿ ՊԻՒՆՈՐԻՅ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԵՒ ԳԻՒՆԱՅԻՈՅ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ

ԱՊԻՆ ամսուան հանդիսին մէջ  
խոստացած էինք | աղաքիոյ (| աւո-  
դիկէ) և շըջակայ գիւղօրէից ազդաց-  
նոց վերայ տեղեկութիւններ հաղոր-  
դել, զոր կը փութամք այս անգամ  
կատարել: Արժանապատիւ Օտքա-  
րիս վարդապետը | աղաքիոյ եկեղեց-  
ւոյն տեսչութիւնը կրկին ընդունե-  
լով, և մայիս ամսոյ մէջ վերադառ-  
նալով իւր պաշտօնին՝ կը խոստանայ  
մեզ ուրիշ տեղեկութիւններ ևս հա-  
ղորդել ազդին՝ Սիօնի միջոցաւ: Առ  
այժմ մեզ հաղորդուածն է իւր առա-  
ջին անգամ 1864ին այցելութեան գը-  
նացած ժամանակ Արամայ գիւղի և  
աւերակ վանքերուն նկարագրութիւն:  
Օդոստոս 18ին, կըսէ, գնացինք

Արամայ գիւղը, որոյ բնակիչները բո-  
լոր հայ են: | աղաքիայէն 10-12 ժամ  
հեռու եւ անոր արեւելեան կողմը  
Շեղէլ-Նեղինիւնիւն կամ Շեղէլ-Տէր-  
իւ ըսուած բարձր լերան վերայ հիմ  
նեալ է: Դիրքը արեւմոքէն յարե-  
ւելք՝ և գէպ ի արեւմոեան հիւսիս  
իւր հայեցուածքն ունի, իսկ արեւելա-  
կողմը հովոաձեւ դաշտավայր մի՛ ուր  
տեղ է գիւղացւոց գերեզմանատու-  
նը, և անոր ետեւի կողմը ցորեն ու  
գարի ծեծելու կալատեղ է: Վա-  
սորդ մի վեր՝ աւերակ մնացած ուխ-  
տատեղ մի կայ սուրբ Յօրոս ան-  
ուամբ:

Արեւմտեան կողմէն միջերկա-  
կան ծովը զուարձալի տեսարան մի կը

ներկայացընէ , ուսկէ կ'երեւին կիսրոս կղզւ յն լերանց գագաթները , երբ պարզ երեկոյեան դէմ արեգակը իւր մայրը մտնելու ժամանակ ոսկե փայլհրային ճառագոյթները կը զարնէ անոնց վերայ : Իսկ առաւօտեան դէմ դէպ ի արեւմուտք գարձած աւտեն , զիւղէն ջ ժամ հեռ ի բարձր լերան վերայէն արեգակն ոսկեփունջ նշյլները ծովեղերէն մինչեւ լեռներուն ստորոտը 7—8 ժամ տարածութիւն ունեցող դաշտին վերայ ծագած ատեն սքանչելի տեսարան մի կը կազմեն մարդուս աշաց . հարաւէն թարապուլուսի բարձրածայր լեռները կ'երեւին , որոնք կ'երթան կը հասնին մինչեւ ի հիւսիս Ռէպէլ-Վէռայ կոչուած լեռը , որ Քէսապի բարձր լերանց մէկնէ : Այն բնութեան գեղեցիութիւնը աւելի զբարէ է դարնան ատեն , երբ գիւղի խրճիթանման անշուք տներուն տանիքէն դէպ յարեւմուտո դիտած ատեն , լեռներուն բարձրութիւնը , ձորերուն խորութիւնը . դաշտին ընդարձակ տարածութիւնը միտնդամոյն մարդոյս աւչաց առջեւ պարզուելով , և անդիւ կողմն ալ ահազին ծովուն արեւելեան ափունքը թարթուսի խորշն մինչեւ (Աւելափա (Աելեւիս) թերակղի մի կազմած , Վաղոքիսի դիբքն ու սահմանները կը տեսնուին :

Այն Արամայ գիւղին մէջ սուրբ Ստեփանոսի անուամբ եկեղեցի մի կայ , մանաւանդ թէ աւերակ մը , բայց կ'երեւի թէ ի սկզբան հյահապ շնչի մի եղած է , որուն կը վիստեն ահազին սիւներուն , խորիսներուն և վարպետացն խոյակներուն մոտցրդները , որոնք խառնի խուռն կ'երեւին եկեղեցւոյն պատին մէջ անյարմարապէս հիւսուած . և պատերուն վերայ կը տեսնուին շատ մի խա-

շաքարեր Աիլլիկիոյ տէրութեան կանգուն եղած ժամանակ քանդակուած , որոնց ձեւովն ու գրեթէ նոյն գրչաւ դրօշմածներ կան նաեւ սուրբ Արուսաղէմի վանուց մէջ շատ տեղեր նոյն ժամանակները փորագրուած : Հիմակ եկեղեցւոյն առաստաղը չոր ծառի ձիւղերով ծածկուած ու վերան հող տարածուած է , որոյ տակ մարդ չըկրնար երկար կենալ թափած հողերէն և կամ անձրեւէն : Իսկ արդի սեղոնը հասարակ քարով հիւսուած ու սեւ կաւով ծեփած է : Եկեղեցւոյն դուրսը հիւսիսակողման պատին երեւոը խաչքար մի կայ պառկած դըրուած 12 թիզ երկայնութեամբ , իսկ թեւերուն երկայնութիւնը ծայրէ ի ծայր 5 թիզ . մէջտեղը բեւեռ գամուած է , որ իւր հնութեանը նշանէ : Դուրսը գաւելիթը ուրիշ խաչքար մի այլ կայ կիսով չափ հողին մէջ կանգուն թաղուած , որոյ նոյնպէս կեդրոնը գամուած բեւեռ կ'երեւիւ Արամայ գիւղին հիւսիսային լեռան ստորոտը եղած գարնիի անտառին մէջտեղ վիմափոր վանք մի կայ սուրբ Արտուածածնի անուամբ , եւրեք խորանով , որ յետոյ մեծ շորժ մի պատահելով աջակողման խորանին մէջտեղէն առաստաղովը դէպ ի աւտք խորանին առջեւ փլուած է : Ասոր մօտ նոյն բակին մէջ դէպ ի արեւելակողմը ուրիշ քարու կիր եկեղեցի մի այլ կայ առւրբ Վէորդի անուամբ մէկ սեղանով . Ծըջակայ գեղացիք երբ կ'ուղեն իրենց խօսքը հաւատարմացընել . հեռուած սուրբ Վէորդի յիշեալ եկեղեցին ցուցընելով Վակիտ ըլլիլլի կը կանչեն : Ամանապէս մեծ ու պլոփի ամեն պարագայի մէջ իրը օգնութիւն իրենց եակը կը պուան :

Այն երկու Հայոց եկեղեցիները

տասն եւ հինգերորդ դարուն շէն եղած են, որոնք Մանգեանց կը կուռէին . վասն զի արժանապատիւ ։ Վիրեմ վարդապետը՝ որ Վրիստակէս եպիսկոպոսի կողմէն Վնափոքայ առաջնորդ կարգուած էր, Վէսապ գիւղի մէջ հանդիպելով իրեն՝ հաղորդեց ինձ յիշատակարան մի, զսր հին Յայսմաւուրբի մի կողմէն օրինակած էր, և է այս . “ Ի յաշխարհս Շամեայ<sup>(1)</sup> ի յերկիրս Ասկունեանց ի վանս սուրբ Վատուածածնի, ընդ հովանեաւ սրբ բցն Գէսրգեայ գէմյանդիման գեղ ջն Յարամու, թվին Զժ. Յումա եպիսկոպոս և Ոիմէօն քահանայ Մանգեանց եկեղեցւոյու : Ատկայն ՃԵ դարէն ետքն այլ դարձեալ մինչեւ ներկայ դարուս սկիզբը շէն եղած պիտի ըլլան, վասն զի հարիւրամեայ ծերունի մի և ուրիշ պառաւ կանայք գեռ կը յիշեն և կը պատմեն նոյն վանքերուն վանահայր Վրիգոր վարդապետ մի, որու ժամանակ չափաւոր սասցուած ալ ունին եղեր յիշեալ վանքերը, արջառ, փեթակ, և շրջակայ արտօրայք բոլոր իրենց էին, որոնց կը տիրեն հիմայ Մուգաստէմ ըստւած այն կողմերու գլխաւոր պէտին մարդիկը իրենց աիրումէն պարգեւ ընդունելով :

Յիշեալ Վրամայ գիւղին լերանը ետեւի կողմը և անոր հարաւային ըստորոտը ուրիշ վանք մի այլ կայ Տէր Տումա անուամբ, որ կ'երեւի թէ Տար Տումա պիտի ըլլայ, որ արաբացւոց լեզուով Յումայի տունը կամ վանքը կը նշանակէ : Բայց հիմակ բոլորովին երեսէ ինկած է և ոչ ուխտատեղի է, ինչպէս վերոյիշեալ սուրբ Վատուածածնի և սուրբ Գէսրգեայ եկեղեցիները, ուր տեղ իրենց տօնի օրը եթէ

քահանայ գտնուելու ըլլայ, պատարագ կը մատուցուի : Ոյն սուրբ Յումայի եկեղեցին բուն իրեն յատկացեալ ձեւ մի ունի : Բայց ի տաճարի աւագ գունեն ունինաեւ ուրիշ դուռը մի տաեանին բերանը, որով եկեղեցւոյն սրահնը (Nef) դասէն ու սեղանէն կը բաժնուի : Ոյն գրան թէ կողմիակի և թէ վերին ու սուրբին վիմափոր քանդակները սքանչելի տիպ մի ունին, բայց ափսոս որ կիսով չափ աւրուած են : Խոկ տաճարին աւագ գրան հարաւային շեմին լայնագիր քարերուն մէկուն վերայ կ'երեւին հայկական երկաթագիրներ կիսամոշ եւ դժուարընթեռնլի, օրոնց մէջ կը կարգացուին հետագայ բառերը “ ՄՏԵՔ Տ . . . ՍՈՒՐԲ ԵԿԱՆԵՑԻ . . . ՇԵՔ ԶՏԵՔ Թ . . . ՈՍ . ԵԿ . . . ԸՍՏՓՏ . . . Ա ԽԱԶՏԻ . . . Ս . ԶԿԱՐԱԿՈՍ . . . ՊԱՏ ԴՊՍ . . . Ա Կայլն : Վուստաղը որ ամբողջ կը կենայ, սրբատաշ քարերով հիսուած է և մէջտեղի կեդրոնի քարը հասարակ խաչ մի կը ներկայացնէ հաւասար թեւերավը, որուն կեդրոնը բոլորակածնեւի մէջ կրկին խաչ քանդակուած է : Եկեղեցւոյ աւագ սեղանին վերայ գերեզմանածեւ շէնք մի կ'երեւի ետքէն շինուած, ուր տեղ Վալազդի և Վալսկի կոչուած ազանդաւորք ուխտի կ'երթան, սեղանին վերայի գմբէթը և պատը կործանուած է, ու սյլազգեաց ձեռքով յետոյ հասարակ պատ մի հիսուած է :

Վրամայ գիւղէն մէկ ու կէս ժամ հետի հիւսիսակողմը եւ Համպուշ ըստւած գեղին մօտ աշտարակ մի կայ Վիլիկեցի իշխանաց ժամանակ շինուած, այսինքն 1348 ին : Պլատի դուռը ունի ահագին քարերով շինուած, որուն վերի շեմին վերայ երկաթագիր յիշատակարան մի կայ կիսամաշ, ուր կը կարդանք հետագայ խօսքերը :

“ ԿԱՆԴԱԵՑԱԿ ԱՇՏԱՐԱԿԱՄ ՀՐԱՄԱՆԱԿ  
ԿԹ . . . Ս (կաթուղիկոս) ՏԵՐ ՄԽԹԹԱ.  
ԲԱՅ . ԻՇ . . . ԶՄԵԶ . . . ՃՆԱԿԻ.Ս  
ՄԵՐ ԶԱՇԽԱՏՈՒ.Ս ԵՒ ՎԱՍՏԱԿԱԲՈՐՍ  
ԳԱՐՖ . . . ԶԵԶ ԵՒ ՄԵԶ . ԶԱՅ :

Ոյն ժամանակներս՝ պատմութենէ  
գիտեմք որ Եգիպտացիք կրկին յար-  
ձակումներ կ'ընէին կիլիկիոյ վերայ,  
վասն որոյ անսոց դէմ դնելու համար  
կ'երեւի թէ քաղաքներու և գիւղե-  
րու մօսերը այսպիսի աշտարակներ  
կը շնէին կիլիկիոյ իշխանք և տանու-  
աէրք . և սոյն աշտարակս ալ Քոնեցի  
Այսիթար կաթողիկոսը շնել տուած  
կ'երեւի , որպէս զի մօտակայ գիւղա-  
ցիք անով կարենան պաշտպանել զի-  
րենք : Յիշեալ աշտարակներ պատին  
մէջտեղէն աստիճաններ կան վերի  
յարկն ելնելու համար , բայց աստի-  
ճաններուն մէկ մասը աւրուած ըլ-  
լալով կարելի չէ վեր ելնել :

Արամաց գիւղի և շրջակայ վանօ-  
րէից և եկեղեցեաց այս աստիճան ա-  
մայութեան և աւերակութեան գա-  
տապարտուած ըլլուլէն , դիւրին է  
գուշակել նաեւ գիւղացւոց բարո-  
յական և քաղաքական կացութեան  
խեղճութիւնը : 1864 օգոստասի 18ին  
էր , կ'ըսէ Արժ . Օտքարիա վարդա-  
պետը , երբ սոցելութեան ելայ Արա-  
մաց գիւղի հայագիտի ժողովրդոց : Յէն-  
քերեւս առաջին անգամ տեսած ըլլո-  
ւուս էր , սիրոս ի խօր խոցեցաւ , երբ  
տեսոյ զիրենք լւաներու գլուխները ,  
ամենախին զՃ խրճիթներու ու ծերպե-  
րու մէջ պատապարուած յետին աղը  
քատութեամբ . որոնց ապրած կեան-  
քը ոչ իրենց և ոչ իրենց ընտանեաց  
համար է , այլ զիրենք հարստահորով  
Արսէրի Վաւգատափիմին՝ որ երկրին  
տէրն է , զոր իրենք Պարոն կ'անուա-  
նեն : Ասոնց քաշած նեղուեց ականա-  
տես եղայ . ոչ ամառը դադարում ու-

նին և ոչ ձմեռը , ոչ գիշեր և ոչ ցե-  
րեկ գիտեն : Վ՞նչ է ասոնց քաշած նե-  
ղութիները , և որու երեսէն են . զա-  
սոնք թէ եւ գրելը կարելի է , սակայն  
հայ սրաի մի անսոնց քաշած վշտերուն  
անտարբեր ու անկարեկիր մնալը ան-  
կարելի է :

Նըսէրի Վուգատուէմ սոյն ան-  
ուամբ նշանակեալ գերդաստանի ա-  
նուն է , անկրօն և առանց աղեաց  
մարդիկներ , որոնք գիւղացի Հայոց  
վերայ քիչ քիչ ազգեցութինին մեծ-  
ցընելով , սկսած են բռնանալ , և ա-  
նոնց ձեռքը գտնուած բոլոր հայրե-  
նական կալուածքները և անշարժ սե-  
փականութիւնները խլելով տիրած  
են . որոնց մէջ դարձեալ զիրենք բա-  
նեցընելով՝ բոլոր վաստակնին վարու-  
ցաննին մինչեւ անգամ գրեթէ բե-  
րաննեուն պատառը խլելով կը յափըշ-  
տակեն : Իրենց կանայքն ու աղջկունքն  
անգամ ազատ չեն յիշեալ Վուգատ-  
տիմներուն ձեռքէն . ոչ ոք կարող է  
իւր աղջիկը կամ տղայն նշանել եւ  
կարգել առանց գիտութեան Պարո-  
նին և անոր հաւանութին ընդունելոյ ,  
և այս ոչ թէ ձրի՝ այլքանի մի հարիւր  
գահէկան տալով իբր պատկ—դրամ։  
Վասոնցմէ ի զատ տեղական իշխանու-  
թիւնն ալ կարեպէս ծանրացած է  
խեղճերուն վերայ . որու ձիւառնե-  
րը թէ պատճառաւ և թէ առանց  
պատճառի երբէք պակսած չեն ասոնց  
բնակարաններէն . թէ իրենք կը կե-  
րակրին և թէ իրենց ձիւառը : Ը-  
բաթն երկու երեք անգամ հաւալէ  
կ'ուղարկեն վերանին , միլի . ֆէրտէի  
ու պէտէլիէ տուրքերը պահանջելով  
իրենցմէ : Տասանորդական տուրքը ,  
որ ըստ կանոնի և օրինաց տէրութե-  
10 առ 0/0 է , իրենք չորսէն մէկ կ'առ-  
նուն հաւալէն , իսկ թի-թի-նէն 10 000  
կապ կ'առնուն , որոնց ամեն մէկ կա-

սլը 10 թիւ երկարութիւն ունի<sup>(1)</sup> :

Ուգատատիմներուն տրուելիք վարուցաններէն եղած արդեանց իրաւունքը, (եթէ արժան է իրաւունքը համարել) հիմակ բանի մի հիւպատուսաց կը տրուի : Այսն զի Ուգատատիմը բաւական ժամանակ կայ սրաւտական լինելով, Արամայ գիւղին (հանդերձ արտերովը) չորս մասին մէկը Գաղղիսյ հիւպատուսին անցած է 20.000 դահեկանի տեղ : Ենցեալ տարի դարձեալ (1865 յունիս) Ուգատատիմը պարոքի համար բանտարկուելով, մնացեալ գիւղին երկու մասն ալ, որ 33.000 դահեկանի տեղ գրաւդրուած էր, կ'անցնի լադոքիսյ իրուսաց հիւպատոս Վարդօ Իլիասին, իսկ միւս մէկ մասն ալ արդէն Ալի Հասան ըսուած տաճիկ Ուգատատիմին իշխանութեան տակն է : Ասոնք ամէնքն ալ, թէ՛ քրիստոնեայ և թէ անքրիստոնեայ գիւղատէրերը ըստ առաջին սովորութեան խեղճ գեղացի Հայոց ոսկորները կը ծծեն և բուրդին հետ մօրթն ալ վերաւորելով կը խուզեն :

Ենցեալ տարի, ինչպէս ականատես եղած եմ, իրուսաց հիւպատոսը ամարտնոց շինելու ժամանակ, իւր եղբայրը Վարդօ Ապիրիթօնը այն աստիճան ձրի (անկորիա) և չարաչար կ'աշխատցընէր խեղճ գիւղացիքը, ուրոնցմէ մէկը չկրնալով դիմանալ սկըսաւ պուալ, խոշոնձի, խառաճա, ճանալութեալ. Չեմ բանիր, աղա: Իսած ամարտնոց Դաբնեաց անտառին մէջ սուրբ Աստուածածնի վանքին կից է, ուր աեղ շինուած էր առաջ վանքին սենեակները: Այս աղդային սեփականութեան մի յափշտակուելուն վերաց Արսոց միաբան

(1) Կամակագիրը չգրեր թէ թիւթիւնի տարիկան բարելը պարագան կը ըստ:

Արժ. Եփրեմ վարդապետին սիրանալ վշտակալով, բարկացած էր գիւղացւոց (1865, սեպտ. 12) թէ, ինչուն համար թողուցած են ազգային վանքի մի հողոյն վերաց օտարազգի Պարոնին շէնք շինել տալու . և անձամբ ալ արդիւելու համար ձեռք զարկած էր: Բայց գիւղացիք անոր սոքերը ինկնելով իմացուցած են՝ որ եթէ ազգային այդ պղոտի իրաւունքը զոհուելու չըլլայ, խեղճ գիւղացիքը, որ արդէն գերի են Պարոն հիւպատուսին, յետ այնորիկ թշուառութեն եւ տառապանաց ծանր շղթաներու տակ կաշիանդուելու պիտի դատապարտին: Աերջապէս Եփրեմ վարդապետ համազուելով անոնց՝ ձեռընթափ եղած էր իւր ազգասիրական դիտաւորութենէն:

Այսպիսի է, ահաւասիկ Արամուգիւղի ժողովրդեան քաղաքական կացութիւնը: Իսկ եթէ անոնց հոգեւորական վիճակն ալ աչքէ անցընելու լինիմք, աւելի խզալի ու արտասուելի կը գտնեմք: Աօթ ութ տարիէ ի վեր, ոչ եթէ առաջնորդի այլ և ոչ կարգաւորի երես տեսած են. իրենց նորածին զաւկըները ամիսներով և տարիներով տուանց միլրութեան մնացած են. իրենք անհաղորդ՝ ու ննջեցեալին առանց օրհնութեան թաղման: Ազգութեան նշան եղողիրենց մայրենի լեզուին տեղ աղճատեալ արարերէն խօսելով, Առուաւորչական եկեղեցւոյ հոգեւոր միսիթարութիւններէն այսպէս զուրկ մնալունին ցաւօք սրոտի կը յայտնեն մեղ, ուրուն արդարեւ հայկական սիրտ մի անկարեկիր չկրնար գտնուիլ երբէք, ու գառն արտասուօք չյայտնել Հայկայ ամենախնդի սերունդի մի վերջին աստիճանի անտէրնջութեն վերսոց զգացած սրտին ցաւն ու մորմաքը: Վկէ

ժամանակէն ի վեր է, որ լադաբիս մեծապատիւ Աստուածատուր է փէն տիին ստիպելովը հոգեւոր այցելութիւններ կ'ընէ սոյն գիւղօրէից մէջ Պատապացի (Օմիւռնիա) Աթանաս վարդապետը, որոյ վարած պաշտօնը թէպէտ և ոչ ըստ փափաքանաց է, այլ մեծ նշանակութիւն ունի աեղւոյն վիճակին նկատմամբ։

Ոյիս 6 ին ի սուրբ քաղաքս հասին Արագիւրու առաջնորդ Պեր Գրիգոր Արքեպիսկոպոսը, և երջան կայիշատակ Մամթէոս Կաթողիկոսի ձեռնասուն աշակերտ պօլսեցի Պերապատիւ Անդրէաս Լալիկոպոսը։ Ամենապատիւ Արքազան Հայոր երեք օր առաջ հեռագրով իմանալով անոնց ի Յուղապէ ելնելը, անմիջապէս Արժ։ Լիքրեմ վարդապետը խրիկեց անոնց ողջամբ գալսւսաը շնորհաւորելու եւ հետերնին ընկերանալու։ Աոցին Պերապատութեանց ազնիւ բնաւորութիւնը և իրենց բարձրագոյն կոչման ինչ աստիճանի արժանաւորութիւն ունենալին սուրբ Աթոռութեանց ճանչելով, չըլացաւ մատուցանել իրենց արժանաւոր յարգանք եւ ընդունելութիւն։

— Լադաբիսյէն մեծապատիւ Աստուածատուր է փէնտին անցեալները 300 կտորի չափ հին գրամմեր խրկած էր ի սուրբ Աթոռու, Հնութեանց թանգարանը դնելու համար։ Յիշեալգրամմերը մեծագոյն մասամբ պըղնձի են, զորոնք Կիլիկիոյ կողմերէն յսոլոված է։ Ա. Աթոռոյս պատիւ ընող սոյն թանգարանը երթալով կը ճոխանաց զանազան տեսակ հնութիւններով և հազուագիւտ առարկայններով շնորհիւ Ամենապատիւ Արքազան Պատրիարք Հօր։ Լու յցս ունիմք որ ազգայնք եւս պիտի ջանան

իրենց կողմէ փոյթ և մէր ցուցընել սոյն նոր հաստատութեանս վերայ, փութալով իրենց քով գտնուած հընութիւններն եւս խրկելու իրբումիակ և ապահով աեղի աւանդապահութեան։

— Պամասկոսի տեսուչ արժանապատիւ Պաբրիէլ վարդապետը վանցի, երեք շարաթէն ի վեր է իւր մահկանացու ընթացքը կրկելով յիշեալ քաղաքին մէջ, իւր աեղը աեսուչ կարգեցաւ գանձակեցի արժանապատիւ Բառնաբաս վարդապետը որ անցեալ ամսոյ 15 ին մեկնեցաւ իւր պաշտօնին երթալու։ Հանգուցեալը 10 տարիէն ի վեր Պամասկոսի եղեցւոյն տեսութիւն ընելով 1860 ի սոսկալի յեղափոխութեան և կոսորածին ժամանակ անձնանուիրութիւր իւր ժողովրեան ազատութելը հոգտարած ու ինքն ալ նոյն օրհասական վտանգէն հաղիւ ազատած էր։ Իւր աչօքն աեսաւ նկեղեցւոյն կողոպտիլն ու այրիլը, բայց ասաւուած ային կամքը չուպեց օր անոր վերականգնուածն ալ տեսնէ, կոչեց վինքը դասակից ընելու Անդրանիկց եկեղեցւոյն մէջ։

— Վացեալ թուալ ցաւօք սրակ յայտնած էինք մէր հոգեցւոյն հայրական զգացմունքները Օմիւռնիոյ Վեսրոպեան դպրոցին ուսմանց արդի փոփոխութեանը վերայ, և կը յուսաւ յինք հակառակ մէր ընդունած լուրերուն՝ անոր իւր վաղեմի բարեկապաշտական, կրօնասիրական և ազգասիրական ընթացից մէջ յարատեւելուն լուրը ընդունել, եւ մէր հազրրդած ցաւալի աեղեկութիւնները ետ առնոււ սիրով, բայց աւելի բաղմապատկեցաւ մէր ցաւը երբ մի և նոյն գանգատները և մի եւ նոյն ցաւակցութիւնները կարդացինք ուրիշ քանի մի ազգային լրագրաց մէջ։ Այսնիւ

բոյն վերայ ուրիշ անգամ կրկին կը դառնանք, եթէ յիշեալ դպրոցի սոյն դատավարտելի ընթացքը շարունակ կելու ըլլոյ, զօր չեմք յուսար, մտածելով որ մեզ հետ համամիտ ու ցաւակից են անշուշտ Օմիւռնիոյ բարեպաշտ ու կրօնակեր մեծադոյն մասսը: Ո՞ւղ աւելի զարմանք պատճառողը այն է՝ թէ այսօրինակ ծանրութեան ինդրոյ մէջ բ'նչպէս կ'ըլլոյ որ մինչեւ ցարդ կը լուէ Օմալիլ, որ իւր քթին տակը հաստատուած Ուսումնասիրական Ժողովոյն ամեն տրամադրութեանցն ու գործոց շօշափողն ու մօտաւոր քննիչն է անշուշտ իրեւբախնդիր խմբագիր, ու կ'ենէ հեռաւոր վանքերու քննութեանը կը պարապի, իրաւունք տալու Ոիօնին՝

որ հայերէն անգամ չդիտէր ու այլոց սրբվեցընելու տարապարտ ճգամբը, և ակար ու անվարժ գրչուը իւր սրբակին ցաւը յայտնել անոր (Օմալիլ) սիրելի քաղաքակցոցը աղջակործան յայտնի որոդայթներուն վերայ, ի՞սկ մենք սոյն նիւթերուս կրկին դառնալու խոստանալով անհամբերաբար կ'սպասեմք որ իւր քաջավորժ ու քաջախօս գրչու յայտնէ մեզ բ'նչ է իւր կարծիքը Օմիւռնիոյ դպրոցին արդի շարժմունքներուն վերայ:

— Ժառանգաւորաց Դպրոցի եւ Տպարանի տեսուչ Արժ. Խորէն վարդապետը վանեցի, Ա. Աթոռոյս հըրամանաւը մեկնեցաւ անցեալ շաբթու երեքմասեայ պայմանաժամ ընդունելով վերադարձի համար:

## ԳԻՏԵԿԱՐ

ԱՍՏԵՂԵԴԻՏՈՒԹԻՒՆ, ԵՒ ԵՐԿԻՄ ՀՈԼՈՎԱԿԱՆ

ԸՆԴԵՄԱՆ ԹՈՒԼՈՒԹԻՒՆԸ

Ապրիլ 3 ին Փարիզու գիտոց կառառին մէջ Պ. Տըլոնէ հետեւեալ Ճառար խօսած է, զըր հանդերձ բնադրովապան համարեցիք հոսուն գույն գնել:

Գիտէ ամեն մարդ որ երկիրո զնդանեւ է. և այն պէս ըլլապատճական համար բաւական է անոնկ նաև անահանգիստէն դուրս գետ ի բայց ելուղ նույն մի. որ կարծես թէ նախ ըլքան մի վերոյ կ'ենէ. յետոյ հորիզոնին վերոյ ամենով կ'երեւի շրու ուրի վերոյ իրայնած ձիւու նման: Տիւ մ'աւ որ ոզանս, կը նայիս որ անոր վարի կողմէրը կ'անհետանան, կոյցի ըլլա միայն կ'երեւին. և շատ շնորհած բոլըրովին աներեւով կ'ըլլոյ: Վ գործ գրաւած միշտ հաշիներուն նայելով, երկիր գրելի խոսքու գունդի մի ըլլաը իմացուած է. և յեւեւնքրւն կողմէ միայն քիչ մի տափեցած, և եթէ ուզէ մէկը երկուուն երկը հարթութեալ տրամադիմ ունեցու գունդի մի վերոյ իմանու պատմիւթեան որպան ըլլաց, զբթէ մէկ հազարամետրի չափ կը գտնէ:

Conférence faite le 3 avril sur l'Astronomie et en particulier du RALENTISSEMENT DU MOUVEMENT DE ROTATION DE LA TERRE, par M. Delaunay, de l'Institut. Emprunté à La semaine des Familles.

On sait que la terre est une boule; pour s'en convaincre, il suffit de regarder un navire sortant du port et gagnant la pleine mer. En premier lieu il monte, semble gravir une montagne, puis paraît à cheval sur l'horizon. Si l'observateur continue à le regarder, il voit peu à peu disparaître ses parties inférieures. D'abord on ne voit plus que les mâts qui, bientôt après, diminuent de hauteur, puis disparaissent complètement; et comme ces observations peuvent avoir lieu de tous les points de la terre, on en conclut que la terre est une surface courbe. D'après les mesures précises qu'on a exécutées, on sait que la terre est une sphère presque parfaite, aplatie légèrement dans le sens de la ligne des pôles; et si l'on voulait figurer cet aplatissement sur un globe de trente-trois centimètres de diamètre, il serait représenté par un millimètre environ.

Մեր Երկարագունդը պարագ միջոցի մէջ կը շարժի, և ինչ հանգամանկներով շարժիը հաս խօսինք: Ազքերնուու գիմաց բերենք թնդանօնի զնակ մի, (Առաջին) սաստիկ արագութեամբ ոգյն մէջ արձակուած, գլրուելով իւր վերաց ու հետը տանելով մաս կերեւութին երեղամն դիաց շրջապատճ օգը, որ խիստ լաւ կը հասանան թէ երկարագունդիս երեւ գտնուած շնչառոր կենդանիիք ինչոյն կը պահպատենի և կը կենան: թէ որ երկիրը անհանու երկարութեամբ ու հարթհաւասար մակերեւոյթ ենթագրելու ըստաք, այն ժամանակ գնասակը երկիրի վերաց կիւներ կոր գիծ մի գծելով, որ համեմասաբար այդիան բիշ կը ըստ, որքան որ մըսն զօրութիւնը մէծ է: Բայց որոշետեւ գնդամեւ է երկիրը, եթէ մըսն արագութիւնը մակերեւորդի մէջ ութ հազարամիջոք է, զնակին գծած գիծը երկիրի մակերեւութի կորութիւնէ աւելի ըստաք: Ըստէ թէ անոր հետ զուգահաւասար է, և գնասակը անահանու կերպով մի երկիրի բորբը կը դառնայ, և կը ըստ մէկ այսպիսի մի: (Չմանանիք որ գնասակը պարագ օդի մէջ նետեցաւ, և առանց մարման մի հանդիպելու կը դառնայ):

Երկիրս ալ արեւուն նկատմանք մի եւ ինչն հանդամանաց մէջ կը գտնուի: Մէկ տարուան մէջ սնոր բորբը ման կ'առնու, և միանդանցն իւր վերաց կը դառնայ: Այս կրին շարժումը հասկընալու համար, աչքերնուու գիմաց բերենիք շրջաբույր երկաթուղի մի լայնածիր դաշտի մէջ շնչառած: և ենթադրենիք մակերեւուն վերաց ման եկող կառքին մէջն բորբը դաշտին երեսը զանուած առարկային բը կը տեսնանին, մահաւանդ շրջաբորսակին մէջն եղած աշխարհիք, զնենք նաև թէ կառքն ալ որ առանցքի վերաց իւցած է: այն ալ իւր վերաց կը դառնայ սիփեներուն վերաց քաղցած ժամանակը: Այս պարագայից մէջ Տամբորութ զլուխը դէպ է կառքին դուռը դարձուցած, հետոշենտ պիտի տեսնէ բորբին թէ ները և թէ դուրը եղած առարկային բը, որց պատճառն է կառքին իւր առանցքի վերաց դառնարը: Կամ աշխարհակը իւր ձախ կողը կը տեսնէ, յետոյ գիմացը, առաջ աջքին, եղած ամեննին չունենիք: Մէկ մ'ալ նոյնիս կրին անդամ ձախ դիէն կերեւի, և որպէս կը շարունակէ:

Այս հանդամանաց մէջ կը գտնուիք մենք ալ երկրի վերաց արեւուն նկատմանք: Արեգակը շրջաբուրին մէջն զը անված աշխարհին է, կառքին իւր առանցքին վերաց շարժիը երկիրի իւր վերաց դառնալի է: Այս կերպով կը տեսնեմիք որ արեգակը արեւելքն է կենէ գէպ ի հարաւ կ'ուզդի, յետոյ արեւունին զին աներեւոյթ կը ըստ, որ հետեւալ օրը նորէն սկի իւր ընթացքը: Երկիրը թնդանօնի գնասակին նման խիստ մէծ արագութեամբ արձակուած է, որ մաներեկորդի մէջ երեւուն հազարամիջոք շափի կոյ: Մեր մարտարի (Երկիրը) իւր շարժմանը բը արեւուն բորբը շրջանակ չկարմը: Երբեմն անոր կը մանայ, երբեմն կը հեռանայ: Գծած գիծը կը ու քիչ մի հանդիպածեւ երկնյած է: Արեգակը այս

Notre globe se meut dans l'espace; nous dirons dans quelles conditions. Qu'on se figure un boulet de canon, lancé dans le vide avec une grande vitesse, tournant sur lui-même et emportant avec lui la couche d'air qui l'enveloppe de toutes parts, ce qui établit des conditions favorables à la conservation des êtres animés qui peuplent la surface. En supposant la terre une surface plane indéfiniment prolongée, le boulet tombera sur la terre en décrivant une ligne courbée de moins en moins quand la force d'impulsion sera de plus en plus grande. Mais comme la terre est ronde, si la vitesse d'impulsion est de huit kilomètres par seconde, le boulet décrit une ligne qui n'est pas plus courbée que la surface de la terre. Elle lui est donc parallèle, et le boulet tournera indéfiniment autour de la terre; ce sera un Satellite. (On se rappelle que le boulet a été lancé dans le vide, et se meut sans rencontrer aucun corps.)

La terre est par rapport au soleil dans les mêmes conditions que ce boulet. Elle fait autour de cet astre un tour entier en une année, et en même temps elle tourne sur elle-même. Pour comprendre ce double mouvement, imaginons un chemin de fer circulaire, construit dans une plaine immense, et supposons que du wagon circulant sur ce chemin de fer on puisse toujours apercevoir les objets qui sont dans la campagne, et surtout une tour qui se trouve vers le centre de la voie ferrée; en outre nous imaginerons que la caisse de ce wagon, montée sur un pivot, peut tourner sur elle-même pendant que le wagon chemine sur les rails. Dans ces circonstances, un voyageur ayant la tête à la portière de cette voiture, verra successivement, en vertu de la rotation du wagon sur lui-même, tous les objets à l'intérieur et à l'extérieur du cercle. Il verra la tour d'abord à gauche, puis devant lui, puis à droite, ensuite il ne la verra plus. La tour reparaitra à sa gauche, et ainsi de suite. En même temps le wagon se déplacera le long du chemin circulaire, de sorte que le voyageur verra successivement la tour correspondre à divers points de l'horizon.

Nous sommes dans les mêmes conditions sur la terre par rapport au soleil. Le soleil, c'est la tour placée au milieu du cercle; au mouvement de pivotement du wagon correspond la rotation de la terre sur elle-même. Ainsi, nous voyons le soleil se lever à l'orient, se diriger vers le midi, puis disparaître à l'occident pour recommencer le lendemain la même course. La terre est lancée comme le boulet de canon avec une très-grande vitesse, qui est d'environ de trente kilomètres par seconde. Notre planète, dans son mouvement, ne décrit pas un cercle autour du soleil; tantôt elle s'approche, tantôt elle s'éloigne de l'astre. Elle décrit une courbe un peu allongée que tout le monde connaît sous le nom d'el-

Հաւկը բամբակին մէկ՝ վառարանին մէջ կը գտնուի, այնպէս որ երկիրը նոյն կրո զծին վերաց մէկ տարուան մէջ քաղաք ժամանակը կու զոյ կը մօ- տի արեւուն, յետոյ կը հեռանայ՝ որ նորէն զոյ մօ- տենաց անոր։ Եւ այս կը բաց յանձնարի 1 ին բառ և 8. որ արեւուն խիստ ճանաչած ժամանակին է, և յուլիսի 1 ին՝ որ անկէ խիստ հեռացած ժամանակին է։ Երկիրս այս հաւկը մանեւ զծին վերաց պարագան- ատեն, 566 անգամ ալ իւր վերաց կը գտնոյ մէկ տարուան միջնի մէջ։ Այս շարժման մէջ լուսին ալ անոր կը ընկերանաց, ու նիբը արեւուն բոլոր որ- տարելուն պէս՝ լուսին ալ իւր շուրջը կը պարագի։ և միանգանցն երկիրն բոլոր դարձած ժամանակ շա- բանակ իւր վերաց ալ կը գտնոնաց։ ասոր համար է որ միշտ մի եւ նոյն երկոր կը ներկայացընէ Երկրի գէմ։ Լուսինն երկրին բոլոր ու Երկրին արեւուն բո- լոր (որոնք կը նաև անին հաւկը մանեւ պահի մի մէջ չափ խաղաղութեարու), դասնարուն համարցած շարժութիւն է որ կը բացատրէ թէ արեգակն խաւարութենի որ կը պատահին երբ լուսինը արեւուն և երկրին մէջ տեղը գտնուեի, և թէ լուսական խաւարութենի երբ մըր մօրգակը արեւուն ու լուսինն մէշան զը պատահի։

Արեւուն զանգուածը Երկրին զանգուածէն մէկ մլիոն 500,000 անգամ մէծ է, ու Երկրին զանգուա- ծը 49 անգամ աւելի մէծ քան զուսպինը։ Կանց որ- րանակիծերը կրնան սապէս մասնակի, արեւուն որ- րանակիծը, 17 մէջը, Երկրին տրամադիծը, 0<sup>0</sup>15, լուսինի տրամադիծը 0<sup>0</sup>04։ Այդ, այս մարմաց գուն- դերը որոնց տրամադիծը ցըցուցինք, իրարևէ զուգա- յարմար հեռաւորութիւն ունենալու համար, պէտք է որ լուսինը երկրէն 4<sup>0</sup>30 ու արեգակը Երկրէն 1,800 մէջը տարածեց ըլլան։

Երկրին հորսդակն շարժման թալլութիւնը իխս փարք բան մի է, օրերը 100,000 տարուան մէջ մէկ մանգերկրորդ կ'երկրին։ Բարեմն Երկրին բոլորունին կանկ առնելու համար, Ենթադրելով որ այս թա- լլութիւնը նոյն աստիճանուն շարունակելով կ'ըսոց, 8,640 տարի պէտք է որ կանգ առնու, որ ներկայ շարուն մարդոց համար վախճախը բան մի չըսոց։

Երկրին հորսդակն շարժութիւն է այս թալլութիւ- նը մէջ յայնաղը, որ թէ ողեւ եւ ողջուի բաց հա- տակելը գտնուարին է։

Հին ժամանակները խաւարութենի մարդոց Երկ- ւարկութեան մէծ վսի ու սարսափ պատճառենաւուն, հին ժամանակի իրենց զրոց մէջ պատճան Էն զա- նոնք, և անոնց իննացուած է թէ իւրաքանչիւր Երկ- րի մէջ որ ժաման հանգիստած էն անոնք։ Եղած հա- շեւներէն զիսեմք որ Երկրը իւր առանցքին վերաց դասնարուն մէկ վեցորդեանի մէջ 22 հարաբակդր ա- րագութիւն ունի։ Պատճառենին զիսեմք Երկրին բանած տեղը իւրաքան յարում լուսինը արեւուն ու Երկրին մէշան զը վետքաւեցաւ։ և արդի եղած միշտ գիտական թեամբ օգնութեամբը կը հաստատուի թէ լուսինի շարժումը շութափած է, որու պատճան է արեւուն անոր վերաց ունեցած արդեցութիւնը։ Դի-

լիպ. Le soleil occupe un des foyers de l'ellipse, de façon que la terre, en parcourant la courbe dans l'espace d'une année, vient se rapprocher de nouveau. C'est vers le 1<sup>er</sup> janvier que la terre est le plus près du soleil, au 1<sup>er</sup> juillet qu'elle en est le plus éloignée. En même temps que la terre parcourt l'ellipse, elle fait environ trois cent soixante-six tours sur elle-même dans l'espace d'une année. La terre, dans ce mouvement, est accompagnée de la lune, qui tourne autour de la terre comme la terre tourne autour du soleil, et la lune pivote continuellement sur elle-même pendant ce mouvement autour de notre planète, ce qui fait qu'elle présente toujours la même face à la terre. C'est ce mouvement combiné de la lune autour de la terre, et de la terre autour du soleil, comme deux valseurs qui parcourraient un salon elliptique en tournant, qui explique et les éclipses de soleil quand la lune se trouve entre le soleil et la terre, et les éclipses de lune quand notre planète est placée entre le soleil et la lune.

Le volume du soleil est égal à environ 1,300,000 fois le volume de la terre, le volume de la terre à 49 fois celui de la lune. Et leurs diamètres peuvent être ainsi représentés: diamètre du soleil, 17 mètres; diamètre de la terre, 0<sup>m</sup>15; diamètre de la lune, 0<sup>m</sup>04. Maintenant, pour placer les astres représentés par les boules dont nous venons d'indiquer les diamètres à des distances convenables, il faut que la lune soit éloignée de 4<sup>m</sup>50 de la terre et le soleil de 1,800 mètres de la terre.

Le ralentissement du mouvement de rotation de la terre est extrêmement peu de chose; les jours vont en croissant de une seconde en 100,000 ans. Donc, pour que la terre s'arrête tout à fait, en supposant que ce ralentissement continue à se produire dans les mêmes conditions, il faudra 8,640 millions d'années, ce qui est rassurant pour la génération actuelle.

C'est le mouvement de rotation de la terre qui a fait déconvrir ce ralentissement si petit et partant si difficile à constater. Au moyen des éclipses qui sont relatées dans les anciens auteurs, à cause de la terreur que ces changements de lumière en ténèbres ont toujours produite sur l'imagination des peuples, on a su à quelle heure ces phénomènes ont eu lieu dans les diverses contrées. Par le calcul on est parvenu à savoir que la terre, en tournant sur elle-même, a une vitesse de 22 kilomètres en une minute. Nous savons par l'histoire la place que la terre occupait au moment où la lune s'est placée entre les rayons solaires et la terre; et à l'aide des observations modernes qui sont précises, on constate que le mouvement de la lune a dû s'accélérer,

տողութիւն երած է նույն որ Երկիր շարժումն ալ  
թարմաց վերաց է : Այս թուլութեան պատճառ  
ծովուն ջերբան քաշուելուն ու յորդելուն մէջ վնար-  
ուելու է : Մէկ խօսքով՝ լուսնին դէպի հարաւ ուղ-  
ղեալ համբան վերաց ծովուն յորդութիւնը 5 ժամ՝  
կամ ըստ այլց 5 ժամ եւս կը մնայ : Այս թուլութիւ-  
նը կատարեալ պիտի ըլլաց արդեօք, այսինքն Երկիրին  
շարժումն բարպարվեն պիտի թուլնայ : Խաչ որ ալ ըլ-  
լայ, անհուն ժամանակի կարօն է, և անէ յառաջ  
Երկիրին ներբին Սլրմութիւնը սրազելով ծովերան ջու-  
րը պէտք է ստուգընէ : Հետեւապէս ակզանուու-  
թիւնն ու մակրութացութիւնը դադրելով՝ թուլու-  
թեան պատճառ ալ ըրլար և Երկիրի հորիումը միօ-  
րինակ շարժում մի կունենայ : Բւրմին մեր հեռաւոր  
ալրեցոց համար ալ Երկիր չլիրաց չլիրաց : Հաֆնադենի առա-  
կին տեղն է, մինչեւ այդ գէոդքը պատահելը :

et cela a lieu par suite de l'action du soleil sur elle. On a remarqué en outre que le mouvement de la terre se ralentissait. La cause de ce ralentissement se trouve dans le phénomène des marées. En un mot, la pleine mer est en retard de trois heures (d'autres disent de cinq heures) sur le passage de la lune dans la direction du midi. Ce ralentissement sera-t-il complet? En tout cas il faudrait un temps infiniment long, et avant cela le refroidissement du foyer intérieur de la terre aurait congelé l'eau des mers. Par suite, les marées n'existant plus, il n'y aurait pas de cause de ralentissement, et la rotation de la terre prendrait un mouvement uniforme. Nous voilà tranquilles sur le sort de nos lointains descendants. C'est le cas de dire avec le bon la Fontaine: Avant cela

Le roi, l'âne ou moi nous mourrons.

## ԳՐԱԴԻՏԱԿԱՆ

### ՄԵՐԴԵՐ ԶԵՐԵՐԻ ԳԵՂԱՄԵՐՆ

Ազգիս նշանաւոր գիտնական ու  
լեզուագէտ անձինքներէն մէկն էր  
Վարդար՝ Օսքարիայի որդին, որց  
գերդաստանին անունը Գեղամեան  
կը կոչուէր, որ խոճենց ալ կըսուի .  
բնիկ լըրեւանցի էր, և իզմիր գալով  
բաւական ժամանակ հօն Անդկից  
հիւպատոսի քով թարգմանութեան  
պաշտօնը վարեց խիստ արժանաւու-  
րութեամբ : Հմուտ էր գաղղիական  
լեզուին, արաբացոց ու պարսից և  
տաճկերէնին, կը խօսէր նաեւ յու-  
նարէն և ուսւսերէն : Իւր բնիկ մայ-  
ունի հին լեզուին ալ հմուտ էր, որ-  
շափ որ կը ներէր անցեալ տասն և ու-  
թերորդ գարը, յորում կորուսեալ  
էր մէր ազդային գալրութիւնը իւր  
առջի շքեզութիւնը ու հյուակապու-  
թիւնը, և գրեթէ գուեհիկ լեզու մի  
դարձած, ինչպէս հիմայ որ բոլորո-  
վին բարձի թողուած է նորելու կ ու-  
սումնականներէն : Այս լեզուով աշ-

խառասիրած է Գեղամեան իւր մէկ  
քանի հեղինակութիւները ու թարգ-  
մանութիւնքը, որոնց մէջ կարեւու-  
րութիւն ունեցողներն են նախ՝ կրո-  
կագիր հոգելահ բանից կոչուած գիրքը,  
որ քիչ շատ սրբագրութեամբ ի լցա-  
ընծայեցաւ սուրբ Աթոռոյս տպա-  
րանէն 1853 ին : Այս գրքիս բարոյա-  
կանութիւնը խիստ ընտափի է, հիմ-  
նեալ ի վերաց կրօնի և բարեկալուու-  
թեան . և ամենակարեւոր է՝ ներկայ  
գարուս երիտասարդաց վարուցն ու  
բարուց նկատմամբ . վասն զի բոլան-  
գակ գիրքը ուղղեալ է առ որդին իւր  
Օսքարիա, զոր ինքը մեկնելէն յետոյ  
իզմիրու մէջ թողուցած էր առանց  
օրինաւոր դաստիարակի և անպաշտ-  
պան ընդգէմ ամենայն աղդ մնլու-  
թեանց և գայթակղութեանց :

Երկրորդ գիրքն է « Համառօդ ու-  
ղիւսութիւն Եթելցոյ ըսուածը, զոր յօ-  
րինած է իլլ . Ինդեքսպուրկ յամի

տեառն 1799 ին, պարզ և դիւրիմաց ոճով, բայց անհարթ և անալի հայկաբանութեամբ, որու մէջ կը խօսի եկեղեցւոյն և անոր բարոյապէս բաժանմունքներուն, գասակարգութեց և աստիճանաց կարգերուն վերայ, և թէ իւրաքանչիւր գասու և աստիճանի եկեղեցականաց պարտաւորութիւնքը որո՞նք են, զոր անհրաժեշտ պարտի կատարել թէ ի փրկութիւն հոգւոց հաւատացելոց և թէ ի պայծառութիւն եկեղեցւոյն։ Աշանակութեան արժանի է ամուսնաւոր գիտնականին կրօնասիրական և բարեպաշտական ջանասիրութիւնը, որով կը փութայ իւր ազգին թէ աշխարհական և թէ եկեղեցականները զգուշացընել այն մոլորութիւններէն ու գայթակղութիւններէն, զոր ժամանակին ու չար օրինակներն ըերած մուծած էին սուրբ եկեղեցւոյն մէջ։ Այսանձելի օրինակ մի կրնայ ըլլալ աստուածասէր մատենագիրս ներկայ լուսաւորեալ դարուս մերազնեայ ու սումնականաց, որոնք կը պարծին թէ գիտութեամբ և թէ լեզուախօսութեամբ, բայց թողլով զեկեղեցին շշմարիտ լուսաւորութեան վառարանը՝ իւրաքանչիւր ոք իւր մտահաճոյ ուսմունքներու և կարգ մի աշխարհական գիտութեց և քաղաքականութեց մէջ կը հաստատէ լուսաւորութիւնը։

Գեղամեանը այն հին գլուխներէն չէր, ինչպէս կ'ըսեն ռամկօրէն, եւ ոչ ալ մոլեռանդ և մոլեկրօն էր, իւր բոլը լեզուագիտութեամբը չերմ քրիստոնեայ էր և սիրող հայրենի աւանդութեանց և ծիսից։ Շնչարիտ բարոյականութիւնը, որոյ հիմն է սուրբ Աւետարանը, կ'ուղեմ ըսել մարդացեալ Աստուծոյ խօսքերն ու պատուէրները, կը յարդէր ու կը պատուէր ուր հանդիպելու ըլլար։

մարդարիտ մի թէեւ տղմի մէջ շաղախեալ ըլլայ, իւր յարդը բնաւ չը կօրսունցընէր։ Այս նպատակաւ էր որ թարգմանեց Վարդար Ջյէնէլոնի Արկածք Տելեմաքայ ըսուած հիւսուածոյ վէպը, եւ 1794 տպուեցաւ ի՛ւախիջեւան քաղաքը, որու մէջ ու ուասպելական վէպերու հետ պատուաստած է հեղինակը սքանչելի բարոյականութիւնի մի, ինչպէս մէծագին գոհար մի երկաժի կամանագի վերայ հագցուցած։ Թարգմանչին աշխատաւուիրութիւնը ու բարի չափը որքան որ գովելի է, թարգմանութեան ոճն ալ այնքան պախարակելի է, որու կրնանք ըսել բնագիրը հայերէն բառերով զրուած։

Ունի նաև Աւետարանի տաճկերէն թարգմանուի մի մաքուր լեզուաւ և տպեալի Աւետերսպուրկ 1819 ին։

Գեղամեանի ընտիր տաճկերէնը Աւրորդութեան վերայ խօսեցած իւր մէկ գրուածքին մէջ կ'երեւի, որոյ վերայ կ'ուղեմք հոս պատմաբանօրէն խօսիլ։

Յամի տեառն 1785 ին Պօլիս գըտնուած ժամանակ, հինդշաբթի օր մի (յունիս 20), կէս օրէն ետքը ժամանակ անցընելու համար Պէկողը Ալդը Ալթը ըսուած զըօսավայրը կ'երթայ, ուր տեղ բոլը հասարակութիւնը սովորութիւն ըրած էին յաճախել, ոմանք նարտ (թավու), ոմանք աղիւսակ (տամա) և ոմանք հրափ (մանկալա) խաղալու։ Վարդար երբէք սէր տուած չէր այսպիսի ռամկական խաղերու։ իւր մտաց զբաղմունքն էր խորհիլ ընութեան վերայ, և օգտուկար ու իմաստասիրական խորհրդածութիւններով զըաղիւցնել իւր միտքը նոյն էսկի իւր կենացը պարագ ժամերուն մէջ։ Այսան որոյ այն քաղմութեանէն հնագի սբճառ

բանին դիմացն եղած մեծ ծառոյն շուքին տակ առանձին նստաւ :

Այս միջոցին էր փառաւոր կերպարանօք պատկառելի էֆէնտի մի եկաւ և իւր ծառաներուն փո.ած գորդին վերայ բազմեցաւ : Իւր վսեմու ծանր հայեցուածքը պարտցուց անգամ մի բոլորտիքը . տեսաւ մարդկանց բազմութիւնը որ համարձակ նստած որը կը խաղայր , որը ծխպամորձը ձեռքը կը ծխէր , որովհետեւ սիկարայի սովորութիւնը գեռ սկըսած չէր . պատանիք այլ իրենց ծնողաց քով պատկառանօք նստած , որովք տակաւին ոչ ծուխ քաշել գետէին և ոչ խաղալ , այլ խաղցողները միայն կը դիտէին ու կը զրօնուին . ամենեւին և ոչ մէկուն հոգն էր էֆէնտիին գալուստը , և ոչ զինքը կը ճանաչէին : Իսկ Ոարդար , որ թէ բնութեամբ ազնիւ և թէ կրթութիւն քաղաքավարութեամբ նշանաւոր անձ մի էր , երբ տեսաւ մահմետականին պատկառելի դէմքը , և ծառաները որ պահ մի չէին դադրեր իրեն արժանաւոր յարդանքը մատուցանելէն , կռահեց իսկցն անոր մեծաստիճան անձ մի ըլլուլ , ծնկան վերայ ելաւ բազմեցաւ , և յարդանօք ընդունեց անոր գալուստը :

Ուրախոցաւ էֆէնտին իւր սրբին մէջ և խիստ ախորժ երեւցաւ իրեն Համեստ ու քաղաքավոր շարժմանքը , որ յայտնի կը ցուցընէր թէ ոչ յերկիւզէ՝ այլ քաղաքակրթութենէ և աղնիւ բնաւորութենէ յառաջ եկած յարդանք մի էր զր իրեն կը մասուցանէր օսոր տէրութեան հպատակ Հայ մի , որ անշուշտ իւր սոքը կը կրէր դէզին մաշնիւրն ու Թուրքը , ինչպէս ոսկորութիւն էր այն ժամանեակ : Շանչեց էֆէնտին անոր սուշոյն փարթամու-

թիւնը և մաքին ճոխութիւնը , միանդամայն եւ սրտին ազնուութիւնը . կանչեց զինքը իւր քով , որ պատկառանօք եւ քանի մի անգամ խոնարհութիւն ընելով ելաւ Ոարդար ու բազմեցաւ անոր գորդին վերայ :

Ի յաջրէն :

## ՈՒՍՈՒՄՆԵՐ

### ՀԱՐՑՄՈՒՆՔ ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆՔ

(Տես թիւ 6. Էրես 94.)

Գ. Հարցման լո-ծո-նի է , իւնիւնար 1686 :  
Դ. Հարցման լո-ծո-նի է , Հունս ու իսկէն 3600 լուր : Ե. Հարցման լո-ծո-նի է , Հունս սպայիցն իւնիւնար 240 : Զ. Հարցման լո-ծո-նի է , ունչ հաղթոյն 150<sup>(1)</sup> :

### Հարցունի է .

Ես ի Ոարմետի էի , յիստանի կամ սարականաց . և երթեալ յեզր գետոյն որում Վարդիանն կոչեն , տեսի երամա ձկանց , և ետու արկանելուուկան , և հանին զհասարակն և զեւթն երամցն , և որ յուռկանէն զերծաւ՝ ի թարփ ընկաւ . և անցեալ գտի զնոսաւ և Ե : Վ. ըդ , գիտեա սոքաւք թէ ընդ ամենայն երամն քանի ձուկն ընկաւլ է :

### Հարցունի ը .

Ի ժամանակի ապստամբութեան Հայոց ի Պարսից և սպանանելցն կամ սարականին Օտոքակայ զԱռուրէն , գեսպան արձակեալ ոմն յաղատաց Հայոց առ թագաւորն Պարսից գցիք արկանել նմա . և գնայր աւուրն ծալսն . և զինի ժն աւուր իմացեալ Կամարականին Օտոքակայ , հետա-

(1) Զ Հարցման մշակ ճիմք թիւը կարդա մ ի գու

մտիկո առաքեր զինի ունել զնա, որք գնային աւուրին Զ մզոն : Արդ, գիտեա թէ ընդ աւուր հասանէին նմա :

Հայոց-ն Յ.

Որս էր կամսարականացն ի Գէն, և կալեալ երէ բաղում, և ինձ օրսամասն ետուն բերել վարազ մի . և վասն զի անարի էր տեսլեամբն, կը ռեցի և գտաւ փորոտին Դ մասն ամենայն կշռոյն, և դլուխն Ճ մասն, ոտքն Ի, ժանիքն Դ, անձն Մ և ՃԲ լիտր : Արդ, գիտեա թէ ընդ ամենայն քանի լիտր էր վարազն :

Հայոց-ն Ճ.

Լոկ (միւրեքքէպ պալլըլը) մի կաւլան ի Վարմեաի ի գետն Երասխ, և ես կշռեցի զնա, և գտաւ դլուխն Դ մասն ամենայն կշռոյն, և տուտն Զ, և մէջքն ՃԽ լիտր : Արդ, գիտեա թէ ընդ ամենայն քանի լիտր էր :

Հայոց-ն Ճ.Ա.

Այր մի վաճառական էանց ընդ երիս քաղաքս, և բաժ արարին (բաժնեցին) յառաջնումն, և հանին զիէս և զերեւոր (զերրորդ մասն) իրայն . և յերկրորդ քաղաքին թուեցին զորինչ ուներն, և հանին զիէս և զերեւորն, և յերրորդ քաղաքին անզրէն այլ թուեցին, և հանին զիէս և զերեւորն, և մինչ ի տուն եկ, միացեալ էին գահեկանք ՃԱ : Արդ, գիտեա թէ ընդ ամենայն քանի գահեկան ուներ :

Հայոց-ն Ճ.Բ.

Կաւակ մի առնել կամէի, և իմ երեք դրամիունք իսկ (երեք դրամ միայն) կային, և այլ ինչ ոչ կայր, և ասացի ցմերձաւորսիմ, տուք ինձ մէն մի սակաւ ինչ որ առնեմ զետուակն : Ոմն ետ Գ կշռոյն, և ոմն զՊ, և ոմն

զԶ, ոմն զԷ և ոմն զՖԸ. և իմ առեալ արարի զնաւակն : Արդ, գիտեա թէ ընդ ամենայն քանի դրամ էր նաւակն :

## Ժ.ԸՄԸՆԸԿԵԳՐԸԸՆԸ

Վնցեալ թուով ծանուցած էինք մարախներուն երեսէն սուրբ քաղաքիս արմատեաց և կերլեաց գիներուն յանկարծ բարձրանալը : Աը փութամք հիմայ ուրախութեամբ ծանուցանել բարեպաշտ ազգայնոց թէ սղութեան պատճառաւ տեղւոյս վաճառականաց ձեռօք գուրսերէն եկած ապրանքները զգալի կերպով գիները իւնցուցին . ցորենին չափը (5 լիտր, կամ 11 ½ հոլոս) որ մինչեւ 35 դահեկանի կը ծախուէր, իջաւ մինչեւ 22-18 ըստ տեսակին, նմանապէս ձեթը . և կը յուսանք որ օր աւուր միւս բերքերն ալ կ'աժաննան, եթէ տեղւոյս կառավարութիւնը հայրաբար հոգ տանելու եւ ամեն բանի նարդ հաստատելու ըլլոյ :

Վմիսէ մի ի վեր է թէ թղենիներն և թէ որթատնիերը սկսած են կրկին անդամնկանանչիլ փթթիլ, և պտուղներ եւս տուլ, մեծ ուրախութեամբ Եցրնելով խեղճ սկարտիզպանաց ու այդէգործոց օրտերը . ձիթենիք միայն մեացած են իրենց հարուածոյն ներքէւ ընկճեւուլ, և յօյ չկայ անոնցմէս ոյս ասրի . վասն զի իրենց ծաղկին ժամանակը խիստ աեցած է : Վյապէս ահա բնութիւնը, որ մայր է ամենայն բառապահաց, իւր զօրութեամբ ըլ կը փութայ վերանորոգեւ երկրիս երեսը, բանալով իւր մայրական ամենալիր արգանգը ի սնունդ և ի մը խիթարութիւն մարգիան :

- Քաղաքիս արքունի կանոնաւոր

զօրաց մեկնելէն իբր երկու շաբաթ յետոյ Դարձայի զօրաբաժինէն երեք հարիւր հոգի հասան հրամանատարութեամբ Վիրալայ Աէհէմմէտ Ալլ պէկի, և հասարակութիւնը որ մտատանջութեան մէջ էր արաբաց ասպատակութեան երկիւղէն, հիմակ ապահովութիւն ստանալով՝ օրհնող են, ինչպէս և սուրբ Աթոռոյս միաբանութիւնը՝ Ա.Ա Եհափառ Կայսեր անդին կենացը համար :

— Յունիս 7 ին Լիւդացի Ալլ անուն տաճկին մէկը, Աէմլէու ու Լիւդի մէջտեղը Պիր-իլ-զէպէքը ըսուած գիւղին մօտ պարտէզ մի ունենալով, ընտանեօքը մէկտեղ կ'երթայ հոն բնակելու : Նշն գիշերը պարտէզին ցանկէն, որ հասարակօրէն սաղըւլը ըսուած ադամաթզենի կ'ըլլան, վայրենի գաղան մի ներս մտնելով, զոր արաբացիք չ'ո կ'անուանեն, կըյարձակի տղայոց վերայ ։ Հայրերնին տեսնելով կը վազէ զիշենք պաշտպանելու . գաղանը զանոնք թողլով կը նետուի Ալլին վերայ, ու ահագին Ճիրանովը պուկունքները կը ճանկէ կը փրցընէ . մարդը կ'ինի կը մարի, ու գաղանը կը դառնայ տղայ քով, մայրերնուն բազուկներն ու ձեռքերը սաստիկ կը վիրաւորէ : Նշն միջոցին տղայոց ողբալի աղաղակներուն ձայնը մօտակայ դըրացիք լսելով՝ կը վազեն կու գան ու հաղիւ թէ չ'ո կը փախցընեն : Ալին հետեւեալ օրը խելքը կորսնցընելով կը մեռնի . կնկան համար յօյս կայ կ'ըսեն . իսկ տղայք սաստիկ վախերնէն հիւանդացած են : Նշն օրերը յիշեալ գաղանը ուրիշ էրիկ մարդ մի և օրիորդ մի եւս վիրաւորելով, Լիւդացի քանի մի սրոտ մարդիկ զինուորուած գիշեր ժամանակ Ճամբուն կը սպասէն, և վերջապէս հանդիպե-

լով անոր՝ կը զարնեն կ'սպաննեն, և այսպէս բոլոր ըլլակայ գիւղօրէք կ'աղատին արիւնարբու ու մարդախոցոշ գաղանի մի մահատու Ճիրաններէն :

— Ասկէ քսան օր առաջ քաղաքիս երեւելի էֆէնտիններէն մէկը տանը մէջ նորոգութեան պատճառաւ գետինը փորել տուած ժամանակ՝ ծակ մի կը բացուի դէպի գետնին խորը ուղղահայեաց եւ քառակուսի շինուած : Հետաքրքրութեան համար քանի մի հոգի զգուշութեամբ եւ չուանեայ աստիճաններու միջոցաւ վար կ'իջնան, ու կը դանեն Աողոմննի ժամանակէն մնացած ահագին շէնք մի Յն կանգուն երկայնութեամբ, 13 լսյնութեամբ ու 12 խորութեամբ : Այս ստորերկեայ նկուղը արդի Օմարեան տաճարին Պաղ-ըլ-Անիսէ (գուռն մեծատանց) ըսուած գրան, և անոր կից Դատարանին և վերջիշեալ էֆէնտուցն տանը ներքեւը տարածուած է ըստ մասնեայ . յատակը մէկ ապառաժ քար է, պատերն ու կամարաձեւ գմբէթը բոլոր սրբատաշ քար են, որոնց ամեն մէկին երկայնութիւնն է մէկ ու կես ճարտարապետական կանգուն և լսյնութիւնը մէկ կանգուն : Դուռ և պատուհան չունի, վասն որոյ կ'երեւի թէ Աողոմննի ժամանակ ալսառնիճի տեղ կը գործածուէր :

Տաճարին արտաքին մեծ եւ ընդարձակ բակին տակը այսպէս պարապ է, որու խորութիւնը կը հաւասարի . Գեթօնեմանի ձորին հետ, և հնութիւնը կը համեմատի սոյն նորագիւտ սառնիճիս հետ : Կան քանի մի ուրիշ շէնքեր ալ, մանաւանդ թէ հիմեր, որոնք միայն մնացած են Աողոմննի հրաշալի Ճարտարապետութեան և սրանչելի շինուածոց մնացորդներէն, որոնք արդարեւ մինչեւ

ցայծմանողները կը զարմացընեն . Այս մնացորդ հնութեանց մէկ մասը կ'երեւի դատարանի ետեւի կողմը եղած տաճարին արտաքին պարսպին մէկ անկիւնը , որոյ չորս հինգ կարգ անարդիլ քարերը յայտնի կը ցուցընեն հնութիւնը . ամեն մէկ քարին երկայնութիւնն է 15 թիզ : Հրեայք հոս կու գան խումբ խումբ և գիրքերը ձեւուընին ազօթելով ու գըլուխնին պարսպին կրթնցընելով ու շատ անգամ ալ զարնելով կու լան ու կ'ազօթեն , յիշելով իրենց ազգին նախնի փառաւորութիւնը եւ արդի թշուառութիւնը :

\* \* \*

Վիճակագրական հաշիւներէն իմացուած է որ Վաղղիոյ մէջ 1850 էն մինչեւ 1860 , տարուէ տարի մօտ հազար հոգւոյ չափ կեանքերնին կը կորսնցընեն կրակէ այրուելով . 1860 էն ի վեր կանանց հագուստները այն աստիճան լայնութիւն և ընդարձակութիւն ստացած են , որ իրաւունք կու տան մարդոց հաւատալու թէ , կրակէ այրողներուն թիւը օրէ օր աւելի շատցած են քան թէ քիցած : Շատոնց ի վեր դիտած են գիտնական մարդիկ որ ամենաթեթեւ կերպով բռնկող կազմ անմիջապէս կը դադրի իւր բոցը հաղորդելէն այն գօլուը կը տաւին , երբ գօլոյին մէջ աղային նիւթ մի խառնած ըլլայ . օրինակի համար անուշադրի փոսփոր , օշնանի ( ալբալի ) թունկադադ (1) , փոսփորաթթուաղ (2) , և բորաքս (3) և ուրիշ ասոնց նման հանքային սոտաներ կամ աղեր : Եւ խիստ դիւրին է դործածելը . հարիւր տրամ բորաքս մէկ լիոր ջրի մէջ կը լուծուի , որոյ 12 մասը պաղ և 2

մասը եռացեալ պէտք է ըլլայ : Եւ թրջէ այս ջրով թէ պատուհանի վարագոյները և թէ թեթեւ հագնեւլիք հագուստներ որոնք դիւրակիզութենէ կը պահպանուին :

Վախորդ ամսոյս 23 ին Հալէս պու կողմէն մեծարգոյ և աղդասէր Յ. Ա. Դիւրքաճիանօֆի միջոցաւ Մարացի պատանի մի խրկուելով Յակոբ մահաւեսի Գրիգոր Ալենչէրեան անունով , ընդունուեցաւ ի շարս աշակերտաց Ժառանգաւորաց Դպրոցիս յետ օրինաւոր բժշկական քննութեան , որոյ վկայագիրն է հետեւեալ : Յիշեալ պատանին թէեւ Մարացի ժողովրդոց կողմէն ի պաշտօնէ խրկուած չէ , բայց Ա. Աթոռս իրը ի պաշտօնէ ընդունելով՝ կը փութայ յայտնել , որպէս զի ուրիշ աշակերտացու ըստ հրահանգին խրկելու հոգ չտանին :

### ԹԻՒ 15

Ամենապատիւ Արբազան Հայր :

Ըստ հրամանի ձեր բարձր Արբազութեան և ըստ կանոնի Ա. Աթոռս Մարացի Յակոբ Գրիգոր Մընչերեան ժառանգաւորաց Դպրոցի աշակերտացու նորեկ պատանին ըստ բժշկական օրինի քննելով . ընտկան կաղմանածքը ըստազոյն , ժառանգական և առաջական յախան ըստ ամենոցի աղատ ըլլալուն ներկայաց սատրազելով կը վկայեմ :

1866 Յունի 25 :

Ի Հայոց Տակարեան :

Գ. Աւելիս

Ա. Տեղիձեան :

### ԶՈՒԱՐՃԱԼԻ ԱՌԱԿԲ

Ջամանակաւ որմնադրին մէկը բարձր տեղ մի աշխատած ժամանակ յանկարծ վար կը գահավիմի կ'ինկնի ինեզ մարդու մի վերայ որ հոն նըստած էր : Որմնադրը թէպէտ թեթեւ վերը մի առաւ , սակայն տակը մնացողը խկայն մեռաւ : Ասիկայ տը-

(1) Le Tungstate de soude. (2) Le phosphate de soude.

(3) Le borate de soude, կամ borax.

զայ մի ունէր, որ իսկոյն իւր հօրը դիակը շալիելով գնաց ի դատարան, և անոր մահուան վրէմը կը պահան չէր : Դատաւորը վճռեց որ որմնաւ դիրը տանին նստեցընեն մարդուն մեռած տեղը, և որդին այն բարձր տանիսն ելեւլով՝ զինքը վար մարդուն վերայ դահավիմէ և սպաննէ զանիկայ, և այսպէս իւր հօրը մահուան վրէմը առնէ : Տղան երբոր այս լսեց սարսափեցաւ և իւր դատը թողլով հեռացաւ անկէ :

Խոհեմութիւնը կը պահանջէ որ եղած վտանգը եղած համարելով դաւլիքին դիմացն առնելու փոյթ տարուի:

— Դիւղականի մի մինը մեռնելով տարին թաղեցին, և երբ իւր էրիկը լալով ետ կը դառնար, հանդիպեցաւ իրեն ծաղրածու մարդուն մէկը ու հարցուց թէ, ինչու այնպէս կողկողալով կու լսր : Պատասխան տուաւ դիւղականը իրենց լեզուին ոճովը ու ըսաց թէ, կինս կորսնցուցի անոր համար կու լսմու : — “ Հաւատա, եղքայր, որ ես չգտայ զինքը, կրկնեց ծաղրածուն ” : Դիւղականը միամտութեամբ դարձաւ ըսաց . “ Ու այդպէս, բարեկամ, այլ մեռաւ ըսել կ'ու զեմ, որոյ թաղումէն ետ կը դառնամ, և որովհետեւ խիստ համեստ ու այրասէր էր, վասն որոյ անմիսիթար ցաւօք կու լսմու : — Պատասխանեց ծաղրածուն . “ Ուու կ'ըսես, եղքայր, թէ որ համեստ ու այրասէր ըլլար, զքել չէր թողուր երթայր :

## ՕՐՆԱՌՅԱՌԻ ՄՆ

Քաղցր պարտաւորութիւն կը համարուէր Ախոնի գէթ ասկէ վեց ա-

միս առաջ վութալ հրատարակելու լշմիածնի Ա. Աթոռացն ձեռագիր գրոց Այցը ցուցակի սպագրութիւն, բայց կարծելով թէ անշուշտ անոր հրատարակութիւնը արգէն ծանօթէ ազգիս բանափիրաց, զանց առածէինք : Հաւ եղաւ մեզ, երբ լսեցինք որ այսպիսի կարեւոր հրատարակութեան մի լուրը Յ տարիէն յետոյ օտար լրագրէ մի առնելով՝ գանգատանօք կը հրատարակեն իրենց թերթերուն մէջ : Յիշեալ Այցը ցուցակը որ 2.340 և ոչ 3000 հատոր գիրք կը պարունակէ, տպեալ է ի Յիֆլիզ Ներսիսեան ազգային տպարանին մէջ 1863 ի՞ն ծախիւք Կարինեան պատուելի Յակոբ վարժապետի : Յառաջաբանութեան մէջ կը խօսի նա ինքն կարինեան, թէ հանգուցեալ Արքազան կաթողիկոսը թանգարանին բարեկարգութիւն մասնաժողովի մի յանձնած ըլլալով, որոյ անդամք եղած են Գեր . Անդրէաս Եպիսկոպոս Վեհապետեան, Արք . Դանիէլ վարդապետ Հահնաղարեանց, Առւքիաս վարդապետ, և քանի մի ուրիշ անձինք . սոյն ժողովին ալ Արք . Դանիէլ վարդապետին յանձնած է պատրաստելու բոլոր գրեանց ցուցակը . որ թէպէտ եւ ունի իւր թերութիւնները, սակայն մեծադադոյն գովութեան արժանաւոր աշխատութիւն մի ըլլալը ըուրացուիր : Ամեն . Հասյի Պատրիարքը Ա. լշմիածնէ վերադարձին բաւական օրինակներ հետը բերած ըլլալով, քանի մի հատ եւս ի Պօլիս ընծայած էր բարեկամոց . վասն որոյ մեզ քիչ զարմանք պատճառած չէ անոր տպագրութեան լուրը Յ տ Յիւրքի լրագրէն առնելով ադային մի քանի թերթերու մէջ հրատարակուիլը :